ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին, կիրակի.— *Մ. Տաճարում պատարագեց հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերայգարյանը և քարոզեց «Հաւատք քո կեցուցին զքեզ» բնաբանով։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Այսօր ուխտավորարար Մ. Աթոռ ժամանեցի Ն Բեյրութից հոգ. Տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը և Եկեղեցասեր Տիկնանց Վարչության անդամները, ինչպես նաև՝ տեր ու տիկին Կ. Ալթունյանները։

***

Սեպտեմբերի 25-ին, կիրակի.— *«Տօն Վարագայ Սրբոյ Խաչի», Մ. Տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. Տ. Նարեկ վրդ. Շաքարյանը՝ «Ս. Խաչն օգնական հաւատացելոց» բնաբանով։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Սեպտեմբերի 26-ին և 27-ին երկուշաբթի և երեքշաբթի.— *Ուխտավորարար Մ. Աթոռ ժամանեցին պրոֆ. Հ. Ճ. Սիրունին (Բուխարեստ), «Սիոն» ամսագրի խմբագիր Ա. Գալայճյանը (Երուսաղեմ), հոգ. Տ. Գարեգին ծ. վրդ. Գաղանճյանը (ԱՄՆ), հոգ. Տ. Գյուտ ծ. վրդ. Նագգաշյանը (Փարիզ), հոգ. Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը (Մարսել) և Տիգրան Բոյաջյանը (ԱՄՆ)։*

***

Հոկտեմբերի 8-ին, շաբաթ.— *Այսօր առավոտյան ուխտավորարար Մ. Աթոռ է ժամանում Հր. Նասիպյանը։*

***

Հոկտեմբերի 9-ին, կիրակի.— *Մ. Տաճարում Ս. պատարագ է մատուցում հոգ. Տ. Գյուտ ծ. վրդ. Նագգաշյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հոկտեմբերի 10-ին, երկուշաբթի.— *Այսօր Բուխարեստ մեկնեց հայոց թեմի թեմական ժողովի փոխ-նախագահ գոկտ. Դր. Բամբուկչյանը, որը Մ. Աթոռ էր ժամանել Տ. Ժուստինիան սրբազան պատրիարքի հետ, սեպտեմբերի 30-ին։*

***

Հոկտեմբերի 12-ին, չորեքշաբթի.— *Մ. Աթոռ ժամանեց ֆրանսահայ նշանավոր գեղանկարիչ Գառգուն (Գառնիկ Զուլումյան)՝ իր հարգելի տիկնոջ հետ։*

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել տաղանդավոր արվեստագետին և զրույց ունեցավ նրա հետ։

***

Հոկտեմբերի 16-ին, կիրակի.— *Մ. Տաճարում պատարագեց հոգ. Տ. Գարեգին աբեղա Բեկճյանը, որը ուխտավորաբար Մ. Աթոռում էր գտնվում հոկտեմբերի 9-ից։*

Ս. պատարագի ընթացքում քարոզեց հոգ. Տ. Գարեղին ծ. վրդ. Գագանճյանը՝ «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս որպէս ես սիրեցի ձեզ» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Այսօր Մ. Աթոռ ժամանեց Դամասկոսի առաջնորդ գեր. Տ. Շավարշ եպս. Գույումճյանը։

***

Հոկտեմբերի 17-ին, երկուշաբթի.— *Այսօր Մ. Աթոռից իրենց պաշտոնատեղիները վերադարձան հոգ. Տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը, Տ. Գյուտ ծ. վրդ. Նագգաշյանը և Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը։ Այսօր Մ. Աթոռից մեկնեց նաև պ. Հր. Նասիպյանը։*

***

Հոկտեմբերի 19-ին, չորեքշաբթի.— *Այսօր Հողեոր Ճեմարանի ուսանողությունը սեսուշ Տ. Ներսես ծ. վրդ. Պոլատյանի առաջնոր-*

դությամբ ուխտի գնաց Աշտարակի շրջանի պատմական վանքերը։

***

Հոկտեմբերի 22-ին, շաբաթ.— Երեկոյան ժամը 6-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, գումարվեց Գեր. Հոգ. Խորհրդի հերթական նիստը։

***

Հոկտեմբերի 24-ին, երկուշաբթի.— Մ. Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց գեր. Տ. Գարեգին եպս. Գաղանճյանը։ Կեսօրից հետո ժամը 2-ին, Վեհարան այցելեց Մ. Հայրենիքում գտնվող ամերիկահայ ուխտավորների շուրջ իննսուն հոգուց բաղկացած խումբը։ Հյուրերին ընդունեցին Մ. Աթոռի միաբանները։ Ուխտավորները այցելեցին Գահասրահը, հանդիսության դահլիճը։

Վերջում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել ուխտավորներին և զրուցել նրանց հետ։ Ն. Ս. Օծությունը հայրական իր պատգամը տալով նրանց, թելադրեց պահել հայրենի մեր հավատքը, ազգային ավանդությունները, մեր Մայրենին և այդ սրբությունների ոգով դաստիարակել նոր սերնդին, ներշնչելով նրանց պաշտամունքը Ս. Էջմիածնի և սերը Հայրենյաց։

Ուխտավորները վերջում հյուրասիրվեցին պատմական հերիսայով և մրգերով։

***

Հոկտեմբերի 25-ին, երեքշաբթի.— Այսօր Մ. Աթոռից իր նոր պաշտոնատեղին մեկնեց գեր. Տ. Գարեգին եպս. Գաղանճյանը։

Հոկտեմբերի 26-ին, չորեքշաբթի.— Երեկոյան ժամերգության ավարտին լուսարարապետ Տ. Հայկազուն Սրբազտնը ուրար կրելու իրավունք շնորհեց Հոգևոր ճեմարանի լսարանական բաժնի ուսանողներ Ս. Վարդանյանին, Ա. Գալստյանին, Հով. Գվրգյանին, Հ. Նալբանդյանին, Հ. Ժամկոչյանին, Գ. Մխիթարյանին, իսկ Ա և Բ դասարանի աշակերտները ստացան դպրության 4 աստիճաններ։

***

Հոկտեմբերի 30-ին, կիրակի.— Մ. Տաճարում պատարագեց հոգ. Տ. Գրիգոր վրդ. Եղիայանը և քարոզեց «Ի դատաստան եկի յաշխարհ» բնաբանով։

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։